

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետում «օբյեկտներ են.» բառերից հետո լրացնել «,բացառությամբ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով փոխանցված և փոխանցվող եկեղեցիների և եկեղեցապատկան կառույցների կառուցապատման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերի.» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 64-րդ հոդվածը լրացնել նոր «1.2.» մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.2. Պետության և համայնքների սեփականության հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին)՝ եկեղեցիների և եկեղեցապատկան կառույցների շինարարության ու դրանց սպասարկման համար:»:

Հոդված 3. Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր «2.1» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին).»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

Առաջին ընթերցմամբ ընդունված «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Անահիտ Բախշյան, Լարիսա Ալավերդյան, Ստյոպա Սաֆարյան, Արմեն Մարտիրոսյան</p>	<p>1. «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի եւ «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերության «2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ» բառերը փոխել «սույն օրենքն ուժի մեջ մտնելու դրությամբ» բառերով:</p> <p>2. «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը եւ «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը հանել:</p>	<p>Չի ընդունվել, քանի որ մայր օրենքները լրացնելով «սույն օրենքն ուժի մեջ մտնելու դրությամբ» բառերով կառաջանա անորոշություն, հաշվի առնելով այն, որ մայր օրենքներն ուժի մեջ են մտել շատ ավելի վաղ, քան ներկայացվող նախագիծը:</p> <p>Չի ընդունվել, հաշվի առնելով վերոգրյալը:</p>	
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում «կառույցների» բառից հետո լրացնել «կառուցապատման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերի» բառերը:</p>	<p>Ընդունվել է:</p>	